Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի ԹԻՎ ԹԻՎ 29-Ն, 30-Ա, 31-Ա, 32-Ն, 36-Ա ԵՎ 37-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 29-Ն որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին, քանի որ որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի փոփոխությամբ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից «1500000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ» գումար է ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Բացի այդ, 1-ին կետի 5-րդ ենթակետը չի համապատասխանում որոշման վերնագրին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով:

Թիվ 30-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին: Բացի այդ, որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված «հավաքարար 16.25 դրույք» թվից և բառից հետո անհրաժեշտ է նշել նաև աշխատավարձի չափը: Թիվ 91-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետում «Հավաքարար» տողի «Աշխատավարձի չափը» սյունակում նշված «89103» թիվը ևս պետք է փոխարինել «16.25 x 89103» թվով:

Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նախատեսվել է «Ջրագծի բանվոր 12.25 դրույք», 3-րդ ենթակետում՝ «Մշակույթի տան պատասխանատու 18.5 դրույք» հաստիքային միավորներ: Սակայն նշված հաստիքների համար պաշտոնային դրույքաչափերի և աշխատավարձերի չափերի վերաբերյալ որևէ գրառում կատարված չէ:

Որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված «Գրադարանավար 22.5 դրույք» թվից և բառից հետո պետք է նշել նաև աշխատավարձի չափը: Թիվ 91-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 4-րդ կետում «Գրադարանավար» տողի «Աշխատավարձի չափը» սյունակում նշված «9 x 89103» թիվը ևս պետք է փոխարինել «22.5 x 89103» թվով:

Թիվ 31-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:

Թիվ 32-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Թիվ 36-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանին կատարված հղումը սխալ է: Նշված հրամանը ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի հունիսի 1-ի N 130-Ն հրամանով ուժը կորցրած է ճանաչվել: Բացի այդ, անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին:

Թիվ 37-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:

Որոշման վերնագրում և բովանդակության մեջ «լրացումներ» բառից առաջ անհրաժեշտ է գրառել «փոփոխություններ և» բառերը:

Որոշման 1-ին կետում նշված «2021 թվականի դեկտեմբերի 30-ի» բառերը և թվերը փոխարինել «2022 թվականի փետրվարի 8-ի» բառերով ու թվերով, իսկ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 90-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» բառերով ու թվերով:

Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին: Բացի այդ, 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ««և Ընդամենը աշխատակազմ 144» թվի փոխարեն կարդալ «146» թիվը» բառերը և թվերը փոխարինել ««Ընդամենը աշխատակազմ» տողի «Հաստիքային միավորը» սյունակում նշված «148» թիվը փոխարինել «150» բառերով ու թվով» և նույն տողի ««Աշխատավարձի չափը» սյունակում նշված «31536800» թիվը փոխարինել «31956800» բառերով ու թվով»:

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան*
*12.04.2022թ.*